հայրենիքի պաշտպանութեան համար: Տեսարանը սրտաշարժ դարձաւ, իմ ճառի ժամանակ, երբ առաջարկեցի գլխարկները վերցնել ի յարգանս հայրենիքի պաշտպանութեան համար ընկածների յիշատակի, ցուցարարներն ինքնաբերաբար ծունկի իջան և դրօշակները խոնարհեցրին»...

Բոլոր պետութիւնների ներկայացուցչութիւնների առջև միտինգներ կազմելուց յետոյ ծովածաւալ բազմութիւնը խռնուեց Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչութեան առաջ: Ցուցումը հասաւ իր գագաթնակէտին: Արտասանեցին սուր, յանդիմանական, կրակոտ ճառեր՝ ընդդէմ բոլշևիկեմալական գործակցութեան: Խօսեցին սոցիալիստ-յեղափոխական Թարխանեանը, վրահայոց Ազգ. Խորհրդի նախագահ Թոփչեանը, վրաց ժողովրդական դւարդիայի պետ Ջուղելին, «Աշխատաւոր»-ի խմբագիր Դ. Ղազազեանը: Մասնաւորապէս ուժեղ ճառ արտասանեց վերջինը, որ ելեկտրականացրեց ամենքին:

«Ընկերնե՛ր, սկսեց նա, Մեծ Արևելքի յեղափոխական աշխատաւորութեան անունից եկել ենք այստեղ հարց տալու նրանց, ովքեր յաւակնութիւն ունեն յեղափոխական անուանելու իրենց, մինչդեռ փաստօրէն դաղիր հակայեղափոխականների հետ են դաշնակցել: Ի՞նչ իրաւունքով կամ ո՞ր յեղափոխական աւանդի հիման վրա դալիս են նրանք մեր՝ Արևելքի աշխատաւորութեան դիրքերը թուլացնելու, սոցիալիստական ո՞ր հասկացողութեամբ համադործակցում են մեր երկրի տիրող դասակարդի՝ խաների, բէդերի, փաշաների հետ: Մենք այսօր այստեղից բողոքում ենք, իբրև յեղափոխականներ նրանց դէմ, որոնք վարկաբեկում են յեղափոխութիւնը, դաղիր դործ կատարում մեր իրականութեան մէջ և հարիւր հազարաւոր անմեղ կեանքերի դահիճ էնվէր փաշաներին, Թալէաթներին ձեռք մեկնում ու յեղափոխական կարմիր դրօշակով քօղարկւում:

Դէմ առ դէմ կանգնած՝ մենք ուղղում ենք այս հարցը բոլշևիկներին և սպասում ենք պատասխանի: Յեղափոխութիւնը վերածելով դիւանագիտութեան, սակարկելով սոցիալիզմը՝ այսօր նրանք Արևելքում երևան են դալիս իբրև աշխատաւորութեան թշնամիներ, իբրև բարեկամ տիրող դասակարդի: Սակայն, մօտ է այն օրը, երբ Արևելքը կը բռնկի յեղափոխական հրդեհով, բայց ո՛չ ձեր՝ Լենինի ու Թալէաթի, այլ մեր՝ տեղական յեղափոխականների ու հաղարաւոր նահատակների շնորհիւ: Ապաղայ պատմութիւնը և ապատ աշխատանքը կասէ իր խօսքը ձեր այսօրուայ կատարած դաղիր դործի համար»:

Պատշդամբ դուրս եկաւ խորհրդային ներկայացուցիչ Ստարկը՝ շրջապատուած իւրայիններով և սկսեց խօսել: Նրա ամէն մի խօսքը ծածկւում էր սուլոցներով, «կորչի»-ներով, վրդովումի ու բողոքի արտայայտութիւններով:

«Դուք ուզում էք դիտնալ, ասաց նա, մեր վերաբերմունքը դէպի Հայաստանի սահմաններում կատարւող դէպքերը (Ձայներ՝ «մենք գիտենք, պատասխանեցէ՛ք, թէ ի՞նչ է ձեր արածը»): Ես կը պատասխանեմ: Ռուսաստանի բանւորդիւղացիական հանրապետութիւնը իր գոյութեան հէնց առաջին օրերից վճռեց ճանաչել ազդերի ինքնորոշումը, նոյնիսկ մինչև անջատում և անկախութիւն (Ձայներ՝ «դրանք խօսքով էին, իսկ գործո՞վ»): Մենք այդ իրաւունքը ճանաչեցինք ո՛չ միայն խօսքով, այլ և գործով (Ձայներ՝ «ա՛ւտ է, փաստեր»): Համեցէ՛ք փաստեր. մենք ճանաչեցինք Էստոնիայի, Լիտուա-